ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն անվանի ռեժիսոր, վաստակավոր նկարիչ Վալենտին Պոդպոմոգովի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի 45 հասցեում փակցնելու համար:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՄԱՐԱՏ ԹՈԽՅԱՆ**

ՏԱԹԵՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վալենտին Գեորգիի Պոդպոմոգովը ծնվել է 1924 թվականի ապրիլի 29-ին, Երևանում:

Մինչև 1936-1940թթ-ը աշխատել է Հայաստանի մուլտիպլիկացիայի ստուդիայում՝ Լ. Ատամանովի գլխավորությամբ: 1940թ.-ից շուրջ 50 տարի աշխատել է Հայֆիլմ կինոստուդիայում՝ որպես բեմադրող նկարիչ: Հանդիսացել է թատրոնների մի շարք ներկայացումների բեմադրող նկարիչ: Մասնակցել է մի շարք մուլտիպլիկացիոն և գեղարվեստական ֆիլմերի ստեղծման աշխատանքներին: Աշխատել է ավելի քան 20 խաղարկային ֆիլմերում՝ որպես նկարիչ, բեմադրող նկարիչ և էպիզոդների դերակատար:

1960թ.-ին գլխավորել է վերածնված Հայկական մուլտստուցիայի ստուդիան: Վերածնունդը մեկնարկել է «Մի կաթիլ մեղրը» ֆիլմով, որը միջազգային փառատոնում արժանացել է Գրան Պրի մրցանակի: Լինելով ռեժիսոր, բեմադրող նկարիչ, մուլտիպլիկատոր, սցենարիստ՝ նկարահանել է ավելի քան 10 անիմացիոն ֆիլմեր:

1960-1964թթ.-ին եղել է Երևանի քաղխորհուրդի առաջին գլխավոր նկաիչը: Իր հեղինակությամբ Երևանում ստեղծվել և ձևավորրվել են հայտնի և սիրված վայրեր և հուշարձաններ:

50 տարեկանում սկսել է զբաղվել գեղանկարչությամբ: Նրա կտավները ցուցադրվում են Երևանի ժամանակակից արվեստի, Սարդարապատի թանգարաններում, ինչպես նաև մի շարք երկրների բազմաթիվ մասնավոր հավաքածուներում:

Նա հանդիսացել է «Ոզնի» շաբաթաթերթի հիմնադիրներից մեկը, ՍՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության անդամ, ՍՍՀՄ նկարիչների միության անդամ:

1966թ.-ին Վ. Պոդպոմոգովին շնորհվել է ՀՍՍՀ վաստակավոր նկարչի կոչում:

2023թ.-ին « Ռեանիմանիա» անիմացիոն ֆիլմերի և պատկերապատման արվեստի միջազգային փառատոնի և «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի համագործակցությամբ Շառլ Ազնավուրի անվան հրապարակի աստղային ճեմուղում

տեղադրվել է մեծանուն անիմատոր, նկարիչ Վալենտին Պոդպոմոգովի անվանական հուշաստղը:

Վալենտին Գեորգիի Պոդպոմոգովը վախճանվել է 1998թ.-ին Երևան քաղաքում

2024թ.-ին լրանում է Վ. Պոդպոմոգովի 100-ամյակը: Այդ կապակցությամբ նախատեսվում է իրականացնել միջոցառումների շարք, որոնց թվում է նաև մեծանուն արվեստագետի հիշատակը հավերժացնող հուշատախտակի բացման արարողությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՄԱՐԱՏ ԹՈԽՅԱՆ**

ՏԱԹԵՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ